անունը առաջ է գրված, քան Սմբատինը և մի տեղ նույնիսկ Գուրգենը «տիեզերական թագաւոր» է համարվել հենց Սանահնի վանքի կառուցման կապակցությամբ։

Այսպես.

«Ի Սանահինս, որ շինեալ էր զթագաւորն մեր տիեզերական Գաւրգեն և Խոսրովանուշ թագուհինն» («Քոթուկ», էջ 57)։

Սխալ է նաև այն բանը, որ Սմբատ Տիեզերակալի եղբայր Գուրգենը երբեք Կյուրիկե չի կոչվել։

Կյուրիկեն առանձին անուն չէ, այլ Գուրգեն անվան բարբառային ձևն է, որ արձանագրությունների մեջ հանդես է գալիս Գուրգեն, Գաւրիկեն, Կորիկէ, Կիւրիկէ ձևերով։ Մեր մատենագիրները, որոնք իրենց ժամանակի ամենագրագետ մարդիկն են եղել, իրենց երկերում աշխատել են բարբառով չգրել, բայց չպետք է մոռանալ, որ Կյուրիկյան թագավորությունն այդ անունով է կոչվում միայն այն պատճառով, որ նրա հիմնադրի անունը Կյուրիկե է եղել, իսկ այդ Կյուրիկեն հենց ինքը Սմբատ Տիեզերակալի եղբայր Գուրգենն է։ Վրաց գրականության մեջ նա հայտնի է Կյուրիկե անունով։

Այժմ անցնենք այն հարցին, թե ինչու այդ բարձրաքանդակների տարազը Սանահնում և Հաղբատում այլ է։

Հարցն այն է, որ Սանահնի Ամենափրկիչ եկեղեցին կառուցված է 966 թվականին, երբ Գուրգենն ու Սմբատ Տիեզերակալը թագավոր չէին, այդ ժամանակ Անիի թագավորը նրանց հայր Աշոտ Ողորմածն էր, իսկ Լոռիի թագավորությունն էլ դեռևս չէր հիմնադրված, ուստի արքայազն Սմբատն ու Գուրգենը բարձրաքանդակների վրա ներկայացված են իրենց տեղական տարազով։ Հաղբատը, որի կառուցումն սկսվել է 976 թվականին, այսինքն Սանահնից 10 տարի հետո, Սմբատն արդեն բարձրաքանդակի վրա ներկայացված է արաբական տարազով, իբրև արաբների կողմից ճանաչված թագավոր, իսկ Գուրգենը՝ դարձյալ տեղական զգեստով է պատկերված։

Ինչպես հայտնի է, Սմբատը գահ է բարձրացել 977 թվականին, պարզ է, որ 976 թվականին հիմնարկված Հաղբատի ս. Նշան եկեղեցին մի տարվա ընթացքում չէին կարող կառուցել, մինչև ֆրոնտոնի բարձրադիր մասի կառուցելը առնվազն մեկ-երկու տարի կտևեր, ուստի և այդ պատկերների մեջ Սմբատն արդեն թագավորական զգեստով է հանդես գալիս։

Անիի թագավորները արաբական զգեստ էին կրում, իբրև արաբական խալիֆայության կողմից ճանաչված թագավորներ, դա երևում է նույն Սմբատի եղբայր և նրա հաջորդ Գագիկ առաջինի արձանից, որ գտնվեց Անիում հենց իր կառուցած բոլորակ ս. Գրիգոր եկեղեցու պեղումների միջոցին, 1906 թվականին։ Գագիկ թագավորն այդ արձանով ներկայացված է գլխին լայն փաթաթած սպիտակ շալմայով, երկարավուն արաբական կարմիր խալաթով և մեջքի փաթաթանով։

Արաբական տարազն այստեղ արաբների կողմից ճանաչված լինելու նշան է։ Հավանաբար Բագրատունյաց տան մեջ միայն արքան ուներ իրավունք և միևնույն ժամանակ պարտավորություն՝ արաբական արքայական զգեստ կրելու։

Սանահնի բարձրաքանդակների Դավիթ Անհողինի որդի Կյուրիկե թագավորին պատկանելու միակ պատմական հիմնավորումը Կիրակոս Գանձակեցու տեղեկությունն է, որ բացարձակապես թյուրիմացության արդյունք է։ Նա թեև մի տեղում Սանահնի վանքի հիմնարկությունը վերագրում է Դավիթ Անհողինի որդուն, բայց իր պատմության մեջ դրանից առաջ հիշատակում է ոչ միայն Սանահնի վանքը, այլև նրա առաջնորդներին։

Մենք ունենք մի շարք ծանրակշիռ ապացույցներ այն մասին, որ Սանահնի այդ բարձրաքանդակները 10-րդ դարի գործ են և ոչ թե 11-ի և պատկանում են Սմբատ Տիեզերակալին և նրա եղբայր Գուրգենին, որ Կյուրիկյան թագավորության հիմնադիրն եղավ։

Թվենք այդ ապացույցները։

1. Բոլոր այն քանդակները, որտեղ կան մարդկային պատկերներ եկեղեցու կաղապարը ձեռքներին, եկեղեցին կառուցել տվող անձնավորություններն են։ Այդպես է Աղթամարի տաճարը, որի պատին նրա կառուցող Գագիկ Ա Արծրունի թագավորը տաճարի կաղապարը ձեռքին, ամբողջ հասակով է պատկերված, Հառիճավանքում, որտեղ ներկայացված են վանքը կառուցող Իվանե և Զաքարե եղբայրները և այլն։

Սանահնում էլ ներկայացված են Ամենափրկիչ եկեղեցին կառուցողները՝ Գուրգենը (Կյուրիկեն) և Սմբատ թագավորը։ Մեր